

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
մայիսի 15-ի N 517 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՄՊԵԿՏՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային
անվտանգության ծառայություն

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի
Հանրապետության ոստիկանություն

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական
ավիացիայի գլխավոր վարչություն՝ բացի վերգետնյա տեխնոլոգիական
ռադիոկապ ապահովող սարքավորումներից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՊԵԿՏՐԻ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՇԵՐՏԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Կառավարական նշանակության սպեկտրի ռադիոհաճախականությունների շերտերը հատկացվում են կառավարական նշանակության սպեկտրի օգտագործման իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից (այսուհետ՝ հայտատու)՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) ներկայացված հայտի հիման վրա, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի հրամանով:

2. Հայտատուի ներկայացրած հայտը ներառում է՝

- 1) հայտատուի անվանումը, գտնվելու վայրը.
- 2) հատկացման ենթակա ռադիոհաճախականությունների շերտերը:

3. Հայտը նախարարությունում մուտքագրվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից ստուգվում է դրա համապատասխանությունը սույն կարգի 2-րդ կետի պահանջներին, և, եթե առկա չեն սույն կարգի 6-րդ կետով նախատեսված հանգամանքները, ապա նույն ժամկետում հայտն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն՝ կարծիքի,

բացառությամբ այն դեպքերի, երբ հայտով պահանջվող ռադիոհաճախականությունների շերտերն ընդգրկված են քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցների շահագործման համար նախատեսված ռադիոհաճախականությունների ցանկում: Եթե հայտով պահանջվող ռադիոհաճախականությունների շերտերն ընդգրկված են քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցների շահագործման համար նախատեսված ռադիոհաճախականությունների ցանկում, ապա նախարարության համապատասխան ստորաբաժանումը 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտը փոխանցում է Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1258-Ն որոշման 2-րդ կետով սահմանված կարգով քննարկելու համար:

4. Սույն կարգի 3-րդ կետում նշված պետական կառավարման մարմինները հայտն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ռադիոհաճախականությունների տրամադրման մասին հայտը և իրենց կարծիքը գրավոր ներկայացնում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն: Բացասական կարծիքի դեպքում այն պետք է լինի հիմնավորված:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված ժամկետում նախարարություն կարծիք չներկայացվելու դեպքում համարվում է, որ հայտի վերաբերյալ առարկություններ չկան:

6. Եթե հայտում ներառված տվյալները թերի են և չեն համապատասխանում սույն կարգի 2-րդ կետով սահմանված պահանջներին, ապա հայտատուն հայտը նախարարությունում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է հայտում առկա կոնկրետ թերությունների մասին:

7. Հայտում առկա թերությունների մասին գրավոր տեղեկացվելուց հետո հայտատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է նշված թերությունները և հայտը կրկին ներկայացնում է նախարարություն:

8. Հայտը մերժվում է, եթե՝

1) սույն կարգի 3-րդ կետում նշված պետական կառավարման որևէ մարմնի կողմից ներկայացվել է հայտի մերժման վերաբերյալ հիմնավորված առաջարկություն.

2) հայտը չի համապատասխանում սույն կարգի 2-րդ կետի պահանջներին, և սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում թերությունները չեն վերացվել:

9. Նախարարության համապատասխան ստորաբաժանումը սույն կարգով սահմանված ժամկետներում հայտի համապատասխանությունն ստուգելուց և սույն կարգի 3-րդ կետում նշված մարմինների կողմից կարծիքներն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում և հայտը կից փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին:

10. Ռադիոհաճախականությունների շերտերի հատկացման կամ մերժման մասին նախարարի հրամանն ընդունվում է սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով հայտը կից փաստաթղթերի հետ միասին ներկայացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան հայտը նախարարությունում մուտքագրվելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով նախարարի հրամանն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն, սույն կարգի 3-րդ կետում նշված պետական կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը գրավոր տեղեկացվում են դրա մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ